ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Վանաձոր «_11_» __05___ 2018թ.

«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրեն Ռոբերտ Չիլինգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից և «Համակարգիչների աշխարհում» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրեն Նունե Խուբլարյանի, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետև՝ Պայմանագիր/, սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում իրականացնել Հավելվածի գնայի առաջարկում նշված ծառայությունների մատուցում, այն է՝ հաստատության համակարգիչների սպասարկում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա դիմաց կատարված աշխատանքին համապատասխան:

1.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև «_31_»_12_2018թ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել դրանից, եթե ժամկետները խախտվել են 7 /յոթ/ օրից ավելի.

2.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է այն: Էական խախտում է համարվում ծառայությունների չմատուցումը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատուցված ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի մատուցած ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.

2.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված ծառայության դիմաց վճարել Կատարողին վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված ծառայությունը.

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.

2.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է այն:

2.3.4 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են վճարելու ժամկետները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին մատուցել ծառայությունը սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.4.2 Պատվիրատուին մատուցել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում պատշաճ որակի ծառայություն: Թերի մատուցված ծառայության դեպքում, լրացնել թերի մատուցվածը:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցած ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված ժամկետների պահպանման համար:

3.2 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցված ծառայության դիմաց վճարելու ժամկետների պահպանման համար: